

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ**  
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ**  
**ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**1. ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ա/ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2014 թվականի միջոցառումների մարզային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին», «Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2014 թվականի մարզային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին», «Ընտանիքի տարվա ընթացքում մարզում կատարված միջոցառումների մասին» հաշվետվությունները:

բ// ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություններ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի», «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրի ու ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի» շրջանակներում Վայոց ձորի մարզում իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև առաջարկություն՝ Հայաստանի Հանրապետության կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման 2016-2020թթ. ռազմավարական նոր ծրագրի մշակման համար:

բ/ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն է ներկայացվել «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման 2015 թվականի մարզային ծրագիրը»:

գ/ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ է ներկայացվել երեխաների պաշտպանության ոլորտում 2014 թվականի կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն:

**2. ՔԱՐՈՂՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

ա/ Ոստիկանության տարածքային բաժինների անչափահասների գործերով տեսուչների հետ համատեղ մարզի դպրոցներում կազմակերպվել են հանդիպումներ նվիրված Մեծ Եղեռնի 100-ամյակին, զրույց-զեկուցումներ «Անչափահասը և հանցագործությունը» և «Անչափահասը և վնասակար սովորյթները» թեմաներով:

«Ընտանիք, ընտանեկան ավանդույթներ» խորագրով դասախոսություն է կարդացվել մարզային գրադարանում՝ նվիրված «Ընտանիքի տարվան»՝ Եղեգնաձորի քոլեջի և գրադարանի աշխատողների մասնակցությամբ, իսկ Վայքի ավագ դպրոցի ավագ դասարանների աշակերտների համար զեկույցում՝ «Երեխայի իրավունքները» թեմայով:

գ/ Կանանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով զեկուցում է կարդացվել Վերնաշենի դպրոցում՝ «Կինը քաղաքականության մեջ» թեմայով:

### **3. ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

ա/ Իրականացվել է որդեգրման գործընթաց՝ Գնդեվազ գյուղի բնակիչ Ս.Ներսիսիյանի դիմումի հիման վրա: ՀՀ ԱՍՀ նախարարություն է ներկայացվել է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ դիմողին որդեգրողի թեկնածու կենտրոնացված հաշվառման վերցնելու համար: Որդեգրման գործընթացը ավարտական փուլում է:

բ/ Մանկատանից կենսաբանական ընտանիք է վերադարձվել մեկ երեխա, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 6 երեխաների տրվել է վկայագիր ներառական և հատուկ կրթություն ստանալու համար:

գ/ 2015 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Վայոց ձորի մարզային վարչության Եղեգնաձորի, Վայքի և Զերմուկի ոստիկանության բաժինների ԱԳ խմբերում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ է գտնվում 5 իրավախախտ անչափահաս, որից 3-ը հաշվառման է վերցվել 2015 թվականին: Համապատասխան դպրոցի տնօրեններին ուղարկվել է գրավոր հանձնարարություն՝ օրինազանց երեխաների հետ նպատակային աշխատանք տանելու համար:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների բաժինը 2015 թվականի առաջին կիսամյանկում մասնակցել է ոստիկանության անչափահասների գործերով խմբերում անցկացվող անչափահասների նախաքննությանը՝ կապված Արենիի և Աղավնաձորի համայնքներում կատարված հրդեհների դեպքերի հետ:

ԸԿԵԻՊ բաժինը Երևանի Մ.Մանուշյանի անվան 48-րդ դպրոցի տնօրինության խնդրանքով նախաձեռնել և մարզի ոստիկանության տարածքային բաժինների միջոցով իրականացրել է որոնողական աշխատանքներ՝ նշված դպրոցի աշակերտ Թ. Նավասարդյանին հանրակրթության վերադարձնելու նպատակով:

դ/ Մարզի Զառիթափի և Քարագլխի համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներից երկու երիտասարդ աղջիկներ ընտրվել են «Երիտասարդ կանանց բարեգործական հիմնադրամի» «Հուսո այգի» ծրագրում՝ միջնակարգ մասնագիտական կրթություն ձեռք բերելու համար:

### **4. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

ա/ Կատարվել է Եղեգնաձորի և Արենիի համայնքի 4 բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների, Մալիշկայի համայնքի 4 դպրոցահասակ երեխաների վիճակի ուսումնասիրություն, տուն այցերի կազմակերպում, սոցիալական աջակցության տրամադրում:

բ/ Իրականացվել է «Ընտանեկան օրենսգրքի» 54-րդ հոդվածի հիմքերով ամուսնալուծության հետևանքով երեխայի հետ չապրող ծնողի երեխայի դաստիարակությանը մասնակցելու իրավունքների ապահովում /Ռինդ, Թառաթումբ, Գոմք, Եղեգնաձոր /:

գ/ Ծնողական իրավունքների վերականգնման արդյունքում խնամակալության տակ գտնվող 3 երեխաներ վերադարձվել են ծնողին /Շատինի համայնք/:

դ/ Կատարվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտված 30 երեխաների կարիքի գնահատում և մուտքագրում Նորք տեղեկատվական համակարգ :

ե/ Թարմացվել է մարզի 6 և ավելի երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանը: Միաժամանակ Խաչիկ գյուղի բնակիչ, 8 երեխաների ծնող Ծաղիկ Գրիգորյանը ներկայացվել է <<Ծնողական փառքի մեդալով>> պարգևատրման:

զ/ Իրականացվել է վարչական հսկողություն մարզի 6 համայնքներում:

է/ Ապահովվել է ԸԿԵԻՊ բաժնից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամի մասնակցությունը Բարձրունու, Սերսի, Արտաբույնքի համայնքների ԽՀ հանձնաժողովների նիստերին՝ քաղաքացիների դիմումների քննարկման և դրանց օրենքով սահմանված կարգով ընթացք տալու նպատակով:

## **5. ԸԿԵԻՊ բաժնի մասնակցությունը աշխատանքային հանդիպումներին և կլոր սեղանների**

ԸԿԵԻՊ բաժինը մասնակցել է՝

- ❖ 2015 հունիսի 19-ին Երևանի Էրեբունի պլազա բիզնես կենտրոնում << ՀՀ-ում երեխաների պաշտպանության ոլորտում կանխարգելման և վաղ միջամտության ծառայությունների անհրաժեշտությունն ու կարևորությունը>> թեմայով կլոր սեղանին,
- ❖ ՀՀ ոստիկանության պետի 07.11.2013թ. թիվ 3837 – Ա հրամանով միջգերատեսչական աշխատանքային խմբի հերթական նիստին՝ նվիրված երեխաների վաճառքի, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի հարցերին,
- ❖ 2015թ մայիսի 14-ին Էրեբունի պլազա բիզնես կենտրոնում: << Արդյունավետ համագործակցություն անչափահասների շրջանում՝ հանցավորության կանխարգելման նպատակով>> թեմայով կլոր սեղանին:

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի  
ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների  
պաշտպանության բաժնի պետի Ժ/Պ Ա.Գրիգորյան